# *ՈՒՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՓԲԸ*

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի
գրանցված կազմակերպություններին

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<**ՈՒԲԱ**>> **ՓԲԸ** համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզ գ.Ուջան, էլ. հասցեն- ujani_ba@mail.ru տնօրեն՝ Ա.Դատումյանին, մինչև 2014թ. փետրվարի 18-ը, ժամը $12^{00}$-ն:

Հայտերը կբացվեն ՀՀ Արագածոտնի մարզ գ.Ուջան 2014թ. փետրվարի 18-ը -ին, ժամը $12^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՈՒԲԱ-ՇՀԱՇՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման

կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 40 թերթ:

*Հարգանքով՝* ***ՈՒՋԱՆԻ ԲԱ ՓԲԸ***

Digitally signed by DATUMYAN ANAHIT 5202580061
Date: 2014.02.12 11:02:03 AMT